Կարգապահական գործ թիվ ԿԳ-23019

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՆԱՐԻՆԵ ԱՐԱՄԻ ԱԲԵԼՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ Գևորգ Սարգսյանի

քննության առնելով փաստաբան Նարինե Արամի Աբելյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2654), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Գևորգ Սարգսյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է, որ իր և փաստաբան Նարինե Աբելյանի միջև կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր, ըստ որոնց վերջինս ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը: Կողմերի միջև կնքվել են թվով երեք պայմանագրեր: Մասնավորապես, 19.01.2022թ. պայմանագիրը վերաբերում է Դիմողի՝ ըստ կտակի ժառանգության ընդունման գործընթացում ներկայացուցչության ապահովմանը, 09.11.2020թ. պայմանագիրը՝ ՀՀ վարչական դատարանում Դիմողի որպես հայցվորի շահերի ներկայացմանը, 09.11.2020թ. մյուս պայմանագիրը՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում Դիմողի որպես պատասխանողի շահերի ներկայացմանը:

Ըստ Դիմողի, փաստաբանի ծառայությունների դիմաց իր կողմից կատարվել են պայմանագրերով նախատեսված վճարումները:

Դիմողը հայտնել է, որ առանց իրեն տեղյակ պահելու, փաստաբան Նարինե Աբելյանը հետաձգել է դատական նիստը, որի մասին վստահորդը տեղեկացվել է ներկայանալով դատարան:

Դիմողը նաև հավելել է, որ ժառանգության վերաբերյալ գործով (թիվ ԱՎԴ2/2029/02/22) փաստաբանը հատուկ վարույթի դիմում է ներկայացրել դատարան, որը թերությունների պատճառով վերադարձվել է և սահմանված ժամկետում կրկին չի ներկայացվել: Նշվածի կապակցությամբ, փաստաբանը հայտնել է Դիմողին, որ վերադարձման որոշումը չի ստացել, մինչդեռ Դիմողը հետագայում դատարանից տեղեկացել է հիշյալ որոշումը ստանալու մասին ծանուցագրի վերաբերյալ, որի վրա առկա է եղել ստորագրություն:

Դիմողը հայտնել է նաև, որ փաստաբան Նարինե Աբելյանը խուսափում է հեռախոսազանգերին պատասխանելուց և չի ցանկանում տեղյակ պահել գործերի ընթացքի մասին: Դիմողը նաև տեղեկացրել է, որ այցելել է փաստաբան Նարինե Աբելյանին և պահանջել միակողմանի լուծել պայմանագրերը, սակայն վերջինս հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ ժամանակ չունի: Այնուհետև, փաստաբանը 20 օր անց ուղարկել է պայմանագիրը իր ցանկությամբ, միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցում:

Միաժամանակ, Դիմողը հավելել է, որ պայմանագիրը լուծելիս փաստաբանը չի վերադարձրել իրեն պատկանող փաստաթղթերը և հրաժարվում է վերադարձնել այն գումարը, որի դիմաց փաստացի ծառայություն չի մատուցել:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրում է փաստաբան Նարինե Աբելյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 26.05.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, ***սակայն Դիմողի կողմից որևէ լրացուցիչ ապացույց չի ներկայացվել:***

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Նարինե Աբելյանին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Գևորգ Սարգսյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023թ. ապրիլի 14-ին ներկայացված բացատրությամբ հատնել է, որ 2020թ. նոյեմբերին Գևորգ Սարգսյանը, դիմելով իրեն, տեղեկացրել է, որ ներկայումս իր դեմ գործ է քննվում ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի դատարանում: Փաստաբանի կողմից 09.11.2020թ. կազմվել է երկու պայմանագիր՝ առաջինը քաղաքացիական գործով, երկրորդը վարչական: ՀՀ վարչական դատարանում քննվող գործով պահանջվել է վերականգնել սեփականության չափերը՝ հիմք ընդունելով նախկին գծագրերը, որի արդյունքում կմերժվի քաղաքացիական հայցը:

Քաղաքացիական գործով կայացված դատական ակտը ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից բեկանվել է և գործը ուղարկել է նոր քննության, որի վարույթը կասեցվել է մինչև վարչական գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը: Գնահատելով կատարված աշխատանքը՝ Գևորգ Սարգսյանը խնդրել է օգնել նաև ժառանգության ընդունման հարցով և 02.10.2022թ. կնքվել է ևս մեկ պայմանագիր, ըստ որի՝ Փաստաբանը պարտավորվել է հատուկ վարույթի դիմում ներկայացնել դատարան:

Անդրադառնալով Դիմողի պնդումներին՝ Փաստաբանը հայտնել է, որ 17.10.2023թ. կայանալիք դատական նիստին չի մասնակցել պայմանավորված առողջական խնդիրներով, ինչի վերաբերյալ դատարան դիմում է ներկայացվել նիստը հետաձգելու պահանջով: Փաստաբանը, առաջնորդվելով ձեռք բերված պայմանավորվածությամբ առ այն, որ Դիմողը նիստերին չի մասնակցելու, քանի որ անհիմն վիրավորում է հակառակ կողմի ներկայացուցչին և խախտում նիստի ընթացքը, նպատակահարմար չի գտել տեղյակ պահել վստահորդին նիստի հետաձգման մասին:

Ինչ վերաբերում է Դիմողի պնդման այն մասին, որ Փաստաբանը ստացել է ծանուցագիրը, վերջինս հայտնել է, որ նմանատիպ նամակ չի ստացել, թերթիկում առկա ստորագրությունը իրեն չի պատկանում և փաստում է, որ տեղի է ունեցել թյուրիմացություն:

Միաժամանակ, անդրադառնալով Դիմողի պնդմանն այն մասին, որ Փաստաբանը չի ցանկացել տեղյակ պահել գործի ընթացքի մասին, Փաստաբանը հավելել է, որ 2020 թվականից Դիմողը երկու օրը մեկ պահանջել է հանդիպում՝ ասելով, որ կարևոր ինֆորմացիա ունի, սակայն միշտ նույն փաստերն էր ներկայացրել: Հաշվի առնելով, որ Դիմողի ամեն մի այցը տևել է մեկ ժամ, անհնարին է եղել գործնական ծանրաբեռնվածության հետ մեկտեղ հանդուրժել այդ ժամանակի կորուստը: Փաստաբանը պարտավորվել է նորությունների առկայության դեպքում տեղյակ պահել վստահորդին:

Փաստաբանը նաև հավելել է, որ Դիմողի պնդումն այն մասին, որ ինքը այցելել է գրասենյակ պայմանագիրը լուծելու նպատակով, իսկ Փաստաբանը հայտնել է, որ ժամանակ չունի, չի համապատասխանում իրականությանը, իսկ հերթական հանդիպման ընթացքում Փաստաբանը տեղեկացրել է Դիմողին, որ ցանկանում է միակողմանի լուծել պայմանգիրը, որի մասին ուղարկելու է ծանուցում:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու

նպատակով՝ 26.02.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 2023 թվականի հունիսի 5-ին ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ 19.01.2022թ., 09.11.2020 և 09.11.2020 թվականներին կնքված պայմանագրերի շրջանակներում իր կողմից ստանձնած պարտավորությունների կատարումը ապացուցվում է թիվ ՎԴ/3819/05/21, թիվ ՎԴ/3451/05/21, թիվ ՎԴ/11423/05/21 վարչական գործերի, ինչպես նաև թիվ ԱՎԴ2/2029/02/22 և ԱՎԴ2/1309/02/19 քաղաքացիական գործերի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով, որոնցից յուրաքանչյուրով իրականացվել են բոլոր անհրաժեշտ դատավարական գործողությունները: Մասնավորապես.

թիվ ՎԴ/3819/05/21 վարչական գործով ներկայացվել է հայցադիմում՝ Կադաստրի կոմիտեին բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մինչդեռ, հետագայում Դիմողը մտքափոխվել է և ցանկացել գույքի ամբողջ տարածքի ուղղում կատարել, այլ ոչ մասնակի և դրանով պայմանավորված կատարվել է չափագրություն ու ներկայացվել է թիվ ՎԴ/11423/05/21 վարչական գործով հայցը, որը բարեհաջող քննվել է, և այս պահին էլ գտնվում է դատաքննության փուլում:

Թիվ ՎԴ/3451/05/21 վարչական գործով ներկայացված վիճարկման հայցը ներկայացվել է Դիմողին անշահախնդիր օգնելու համար, որի դիմաց վարձատրություն չի պահանջվել և չի ստացվել:

Թիվ ԱՎԴ2/1309/02/19 քաղաքացիական գործը Փաստաբանին հասել է դատաքննության փուլում: Տվյալ գործով Դիմողը հանդիսացել է պատասխանող: Ի վնաս Դիմողի կայացված դատական ակտի դեմ Փաստաբանը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որն ամբողջությամբ բավարարվել է: Ներկայումս, գործի նոր քննության փուլում Փաստաբանի միջնորդության հիման վրա գործի քննությունը կասեցված է, մինչև թիվ ՎԴ/11423/05/21 վարչական գործով վերջնական դատական ակտի ընդունումը:

Թիվ ԱՎԴ2/2029/02/22 գործով ներկայացված դիմումը վերադարձվել է, որի ծրարը սակայն Փաստաբանի կողմից չի ստացվել: Հետծանուցման թերթիկի վրայի ստորագրությունն Փաստաբանին չի պատկանում, ինչի մասին վերջինս հայտնել է նաև Դիմողին:

Անդրադառնալով արագ և արդյունավետ կատարելուն՝ Փաստաբանը հայտնել է, որ գործողությունների արագությունն ու տեմպը որոշվել է Դիմողի հետ համատեղ, ողջամիտ և հնարավոր ժամկետներում: Արդյունավետության հետ կապված բոլոր ապացույցներն առկա են «դատալեքս» դատական տեղեկատվական կայքում, ինչպես նաև դրա մասին է վկայում դատաքննության փուլում գտնվող գործով դրա հունը հաջողվել է փոխել այնպես, որ գործի՝ հօգուտ Դիմողի լուծվելու հավանականությունը ակնհայտորեն աճել է՝ ինչը խոսում է հենց Փաստաբանի արագ և արդյունավետ գործելու մասին:

Փաստաբանը նաև հավելել է, որ հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացրել է դիմողին, ինչի մասին վկայում են նրանց միջև նամակագրությունները:

Փաստաբանը նշել է, որ երեք պայմանագրերը լուծվել են իր կողմից միակողմանիորեն, դրա մասին ծանուցելով Դիմողին: Փաստաբանի պնդմամբ, Դիմողը բազմիցս ինքն իր նախաձեռնությամբ այցելել է Կադաստրի կոմիտե, վիճաբանել է աշխատակիցների, պետի տեղակալի հետ, վիրավորել Կադաստրի կոմիտեի ներկայացուցչին դատական նիստից առաջ և հետո, ձայնը բարձրացրել դատարանում, ամեն դատական նիստից առաջ և հետո վիճաբանել կադաստրի ներկայացուցչի հետ, ինքն իր նախաձեռնությամբ հետաքննություն սկսել գործը քննող դատավորների նկատմամբ, իր ներկայությամբ բազմիցս սպառնացել: Բազմիցս անտեսելով պայմանագրերով նախատեսված կոնֆիդենցիալ ինֆորմացիան գաղտնի պահելու դրույթը՝ հանդիպումներ և քննարկումներ է ունեցել այլ փաստաբանների հետ, գործը քննարկել տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների հետ՝ անմիջական վտանգ ստեղծելով գործի մարտավարության և այլ գաղտնի տվյալների արտահոսքի:

Փաստաբանը հավելել է, որ Դիմողի հետ վերջին հանդիպման ընթացքում՝ ս.թ. մարտի վերջին, ինքը Դիմողին հայտնել է պայմանագիրը լուծելու վճռականության մասին, բացատրել, որ կարող է մոտակա դատական նիստին ներկայանալ, որպեսզի գործը չտուժի, սակայն վերջինս հրաժարվել է: Փաստաբանի պնդմամբ նշված հանդիպմանը ներկա է եղել նաև իր կոլեգան՝ Մանան Աբաջյանը, ով կարող է հաստատել Փաստաբանի կողմից հայտնված տեղեկությունների ճշմարտացի լինելը:

Նշվածից հետո էլ Փաստաբանը ստացել է Պալատի գրությունը Դիմողի բողոքի վերաբերյալ: Փաստաբանը նաև հայտնել է, որ Դիմողի շահերին վնասող գործողությունների կատարման վերաբերյալ ապացույցներ դրանց առկայության պարագայում պետք է ներկայացնի Դիմողը: Անդրադառնալով պայմանագրերի լուծման արդյունքում փաստաթղթերը /3 հատոր/ վերադարձնելուն՝ հավելել է, որ Դիմողից արձագանք չի ստացել, իսկ հոնորարը ենթակա չէ վերադարձման որևէ մասով՝ հաշվի առնելով պայմանագրերը լուծելու հիմքը:

Փաստաբանի պնդմամբ դատական գործերի ներկայիս վիճակը բացառում է ձեռնհասության, մասնագիտական բարեխղճության վերաբերյալ որևէ կասկածներ, քանի որ դրանք ի սկզբանե անգամ Դիմողի կողմից չեն նշվել, վերջինիս կողմից նշվել է նամակը դատարանից ստանալու հանգամանքը, որը բացատրվել է իր կողմից:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.04.2023թ. թիվ 120-Ա/ԿԳ-23019 որոշմամբ փաստաբան Նարինե Աբելյանի նկատմամբ **Օրենք**ի19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ

հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 2.7.2, 3.5.5, 3.6.1, 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1, 3) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

04.05.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 30.06.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ Աշխատակիցը հաստատված է համարել այն, որ թիվ ԱՎԴ2/2029/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում Փաստաբանը ներկայացրել է Դիմողի՝ գործով հայցվորի շահերը: Մասնավորապես Փաստաբանը ներկայացրել է հայցադիմում՝ ըստ կտակի ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունելու պահանջների մասին, որը դատարանի 08.12.2022թ. որոշմամբ վերադարձվել է: Նշված գործով հայցադիմումը կրկին չի ներկայացվել:

02.10.2022թ. պայմանագրի շրջանակներում՝ Թիվ ԱՎԴ2/2029/02/22 քաղաքացիական գործով Փաստաբանի կողմից ներկայացված հայցադիմումը դատարանի 08.12.2022թ. որոշմամբ վերադարձվելուց հետո այն կրկին չի ներկայացվել դատարան:

Փաստաբանը 2022 թվականի ընթացքում տեղեկացրել է Դիմողին հանձնարարության ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Փաստաբանը վերադարձրել է հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը Դիմողին:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 17.08.2023թ. ժամը 18:30-ին և 20.09.2023թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ընդհանուր 4 պայմանագրերի շրջանակներում: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև վերջիններիս միջև 09.11.2020թ., 09.11.2020թ., 19.04.2022թ. և* ***02.10.2022թ. (որին ըստ էության վերաբերում են դիմողի կողմից նկարագրված հանգամանքները)*** *կնքված պայմանագրերով:*

2. Դիմողի և Փաստաբանի միջև 09.11.2020թ., 09.11.2020թ., 19.04.2022թ. և ***02.10.2022թ.*** կնքված պայմանագրերով սահմանած պայմանագրերի գինը վճարվել է Փաստաբանին: *Նշված փաստը հաստատվում է (նաև չի հերքվել նրանց Փաստաբանի կողմից) Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Փաստաբանի կողմից իր պարտականությունների կատարմանը ձեռնամուխ լինելու հանգամանքով:*

3. 09.11.2020թ. պայմանագրի 1.2-րդ կետով սահմանված առարկային համապատասխան՝ Փաստաբանը պետք է իրականացներ ներկայացուցչություն ՀՀ վարչական դատարանում, որտեղ Դիմողը հանդես է գալիս որպես Հայցվոր,

09.11.2020թ. պայմանագրի 1.2-րդ կետով սահմանված առարկային համապատասխան՝ Փաստաբանը պետք է իրականացներ ներկայացուցչություն ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, որտեղ Դիմողը հանդես է գալիս որպես Պատասխանող,

19.04.2022թ. պայմանագրի 1.2-րդ կետով սահմանված առարկային համապատասխան՝ Փաստաբանը պետք է իրականացներ ներկայացուցչություն Դիմողի՝ ըստ կտակի ժառանգության ընդունման գործընթացում,

02.10.2022թ. պայմանագրի 1.2-րդ կետով սահմանված առարկային համապատասխան՝ Փաստաբանը պետք է իրականացներ ներկայացուցչություն ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, որտեղ Դիմողը հանդես է գալիս որպես դիմումատու՝ ըստ կտակի ժառանգության ընդունման գործի շրջանակներում:

Նշված փաստերը հաստատվում են Դիմողի և Փաստաբանի միջև 09.11.2020թ., 09.11.2020թ., 19.04.2022թ. և 02.10.2022թ. կնքված պայմանագրերով:

4. 09.11.2020թ. պայմանագրին համապատասխան՝ թիվ ՎԴ/3819/05/21 վարչական գործի շրջանակներում Փաստաբանը ներկայացրել է հայցադիմում՝ Բարենպաստ վարչական ակտ, այն է՝ գրանցել Գևորգ Սարգսյանի/Սարկիսյան/ սեփականության իրավունքը ՀՀ, Արարատի մարզ, Այնթապ 1-ին շարք, տուն 15/1 անշարժ գույքի նկատմամբ՝ Շրջսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի օգոստոսի 21-ի նիստի համար 10 արձանագրությամբ տրված նախագծում առկա չափերին համապատասխան՝ վերացնելով ՀՀ կադաստրի կոմիտեի 16.03.2021թ. թիվ ԱՏ-16032021-0874 որոշումը, պարտավորեցնելու պահանջի մասին: Նշված գործով ՀՀ վարչական դատարանը 30.03.2022թ. որոշմամբ կարճել է գործի վարույթը՝ հաշվի առնելով, որ Դիմողը 16.03.2022թ.-ին դատարանին ներկայացված դիմումով հայցվորը հրաժարվել է հայցից և

խնդրել է կարճել գործի վարույթը: Թիվ ՎԴ/3451/05/21 վարչական գործի շրջանակներում Փաստաբանը ներկայացրել է հայցադիմում՝ Արարատի մարզի Այնթափ համայնքի՝ 04.02.2021թ. թիվ 27 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Նշված գործով ՀՀ վարչական դատարանի 28.07.2021թ. որոշմամբ հայցը բավարարվել է և անվավեր է ճանաչվել վարչական տույժ նշանակելու մասին 04.02.2021 թվականի թիվ 27 որոշումը: Թիվ ՎԴ/11423/05/21 վարչական գործի շրջանակներում Փաստաբանը ներկայացրել է հայցադիմում՝ Որոշակի գործողություն կատարելուն, այն է՝ գրանցել ՀՀ, Արարատի մարզ, Այնթապ համայնքի 1-ին փողոց, 15/1 բնակելի տան նկատմամբ Գևորգ Սարգսյանի սեփականության իրավունքը 29.07.2021թ. «Արխիտեկտում» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծի, Մասիսի շրջխորհրդի գործկոմի 1991 թվականի սեպտեմբերի 11-ի նիստի որոշման հիման վրա տրված հատակագծի և Մասիսի շրջանի գլխավոր ճարտարապետ Հ.Գ. Նազարյանի կողմից հաստատված՝ Շրջսովետի գործադիր կոմիտեի 1991 թվականի օգոստոսի 21-ի նիստի համար 10 արձանագրության հիման վրա տրված նախագծի չափերին համապատասխան, պարտավորեցնելու և, որպես ածանցյալ պահանջ ՀՀ, Արարատի մարզ, Այնթապ համայնք, 1-ին շարք, թիվ 15 և 17 բնակելի տների՝ համապատասխանաբար թիվ 03-012-0007-0058 և 03-012-0007-0068 կադաստրային ծածկագրերով սեփականության իրավունքի գրանցումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Նշված գործը ներկայումս գտնվում է ընթացքի մեջ:

09.11.2020թ. պայմանագրին համապատասխան՝ թիվ ԱՎԴ2/1309/02/19 քաղաքացիական գործի շրջանակներում Փաստաբանը ներկայացրել է Դիմողի՝ գործով պատասխանողի շահերը: Նշված գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 21.05.2021թ. որոշմամբ Դիմողի բողոքը բավարարել է մասնակի, իսկ ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԱՎԴ2/1309/02/19 քաղաքացիական գործով 09.02.2021 թվականի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության:

19.04.2022թ. պայմանագրին համապատասխան՝ Փաստաբանը պետք է իրականացներ ներկայացուցչություն Դիմողի՝ ըստ կտակի ժառանգության ընդունման գործընթացում, իսկ **02.10.2022թ. պայմանագրին համապատասխան՝ թիվ ԱՎԴ2/2029/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում Փաստաբանը ներկայացրել է Դիմողի՝ գործով հայցվորի շահերը: Մասնավորապես Փաստաբանը ներկայացրել է հայցադիմում՝ Ըստ կտակի ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունելու պահանջների մասին, որը դատարանի 08.12.2022թ. որոշմամբ վերադարձվել է: Նշված գործով հայցադիմումը կրկին ներկայացնելու վերաբերյալ տեղեկություն առկա չէ:**

Նշված փաստերը հաստատվում են «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:

5. 02.10.2022թ. պայմանագրի շրջանակներում՝ Թիվ ԱՎԴ2/2029/02/22

քաղաքացիական գործով Փաստաբանի կողմից ներկայացված հայցադիմումը դատարանի 08.12.2022թ. որոշմամբ վերադարձվելուց հետո այն կրկին չի ներկայացվել դատարան: *Նշված փաստը հաստատվում է ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 08.12.2022թ. որոշմամբ և «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով: Նշվածի կապակցությամբ Փաստաբանը հայտնել է դիրքորոշում, որ չի ստացել դատարանի տվյալ որոշումը, իսկ ծանուցագրի վրա առկա ստորագրությունը իրեն չի պատկանում:*

6. Փաստաբանը 2022 թվականի ընթացքում տեղեկացրել է Դիմողին հանձնարարության ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված՝ Դիմողի և Փաստաբանի միջև առկա հաղորդագրություններով:*

7. Փաստաբանի և Դիմողի միջև 09.11.2020թ. 09.11.2020թ. 19.04.2022թ. **02.10.2022թ.** կնքված պայմանագրերը լուծվել են: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Փաստաբանի 04.04.2023թ. ծանուցմամբ:*

8. Չնայած նրան, որ Փաստաբանի կողմից **02.10.2022թ. պայմանագրերի** շրջանակներում ըստ էության ամբողջ ծավալով չեն կատարվել իր պարտականությունները, այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Կանոնագրքի 3.8.4 ենթակետը փաստացի հղում է կատարում փաստաբանի և վստահորդի միջև կնքված պայմանագրին: Այսպիսով, Փաստաբանի և Դիմողի միջև **02.10.2022թ. կնքված պայմանագրի 2.2.8 կետով** նախատեսված է պայմանագիրը լուծելու դեպքում վճարված գումարը չվերադարձնելու դրույթը: Նման պայմաններում, Փաստաբանի կողմից փաստացի չկատարված աշխատանքի դիմաց վճարված գումարը Դիմողին չվերադարձնելու հարցը գտնվում է Կանոնագրքի կարգավորման տիրույթից դուրս: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև 02.10.2022թ. կնքված պայմանագրով: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Դիմողը 07.06.2023թ. դիմումով ըստ էության հայտարարել է, որ Փաստաբանի նկատմամբ բողոք չունի:*

9. Փաստաբանը վերադարձրել է հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը Դիմողին: *Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև 02.06.2023թ. կնքված փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտով, ինչպես նաև Դիմողի 07.06.2023թ. դիմումով՝ Փաստաբանի նկատմամբ բողոքի բացակայության մասին:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Նարինե Աբելյանը փաստաբան է հանդիսանում 06.12.2019 թվականից, և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում ունի 2 կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Նարինե Աբելյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման համար: Միաժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Նարինե Աբելյանի նկատմամբ 3.6.1 և 3.8.4 (3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշների մասով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

7.1 Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրով, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝*

1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ

օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը.

2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,

5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,

6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Կանոնագրքի 3.8.3-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է բացատրել վստահորդին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին: Փաստաբանն իրավունք չունի թողնել գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը կարող է հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն(…):*

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝*

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ…:

Վկայակոչված կանոնների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի վստահորդի և փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ մասնավորապես, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին, իսկ պայմանագիրը լուծելուց հետո վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը, ինչպես նաև պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի չի կատարվել աշխատանք (եթե պայմանագրով այլ բան սահմանված չէ):

Բացի այդ, իր հերթին Կանոնագրքի որոշ իրավակարգավորումներով ուղղակիորեն պայմանավորված է այն հանգամանքը, որ փաստաբանն իրավասու չէ ցանկացած իրավիճակում և առանց որևէ պատճառաբանության հրաժարվելու իր կողմից վստահորդի

առջև ստանձնած պարտավորությունների կատարումից, որպիսի իրավիճակում կարող են վտանգվել վստահորդի շահերը, իսկ վստահորդը ժամանակին այլ իրավական օգնություն չստանալու պարագայում կարող է հայտնվել խոցելի և անելանելի դրության մեջ:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

7.1 Անդրադառնալով Փաստաբանին վերագրվող վարքագծում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներին՝ Հանձնաժողովն արձանագրում է

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Դիմողի կողմից նկարագրված հանգամանքները փաստացի վերաբերում են Փաստաբանի և Դիմողի միջև **կնքված ընդհանուր թվով 4 պայմանագրերից միայն՝ 02.10.2022թ. պայմանագրի** շրջանակներում Փաստաբանին տրված հանձնարարության կատարմանը**:** Մասնավորապես, 02.10.2022թ. պայմանագրի 1.2-րդ կետով սահմանված առարկային համապատասխան՝ Փաստաբանը պետք է իրականացներ *ներկայացուցչություն ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, որտեղ Դիմողը հանդես է գալիս որպես դիմումատու՝ ըստ կտակի ժառանգության ընդունման գործի շրջանակներում:*

02.10.2022թ. պայմանագրի շրջանակներում իրեն տրված հանձնարարության շրջանակներում Փաստաբանը ներկայացրել է Դիմողի՝ որպես թիվ ԱՎԴ2/2029/02/22 քաղաքացիական գործով հայցվորի շահերը՝ ներկայացնելով հայցադիմում՝ ըստ կտակի ժառանգության ընդունման ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու և ժառանգությունն ընդունելու պահանջների մասին: Նշված հայցադիմումը՝ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի համաձայն, դատարանի 08.12.2022թ. որոշմամբ վերադարձվել է, սակայն հետագայում դրա կրկին ներկայացված լինելու վերաբերյալ տեղեկություններ առկա չեն:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ցանկացած դեպքում հանձնարարության կատարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը փոխկապակցված է դրանց արդյունավետ՝ այդ թվում ժամանակային առումով գործադրման հետ: Ընդ որում, հաշվի առնելով փաստաբանի իրավապաշտպան առաքելությունը և համապատասխան իրավունքի իրացման համար օրենքով սահմանված ժամկետները՝ Փաստաբանն իր վստահորդին ցուցաբերելով բարեխիղճ իրավաբանական օգնություն, պետք է հետևողական լինի գործի ընթացքին և ողջամիտ ժամկետում, կատարի իր

վստահորդի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:

Տվյալ դեպքում, չնայած նրան, որ Դատարանի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը ուղարկելու վերաբերյալ ծանուցագրի վրա, ըստ Փաստաբանի պնդման, նշված է եղել այլ անձի ստորագրությունը, իսկ Փաստաբանն իր պնդման համաձայն՝ տեղյակ չի եղել թիվ ԱՎԴ2/2029/02/22 քաղաքացիական գործով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման վերաբերյալ, այնուամենայնիվ, Փաստաբանը՝ ելնելով Դիմողի նպաստավոր շահերից և նրա իրավունքների արդյունավետ պաշտպանության կազմակերպման անհրաժեշտությունից, պետք է իր հերթին ողջամիտ ժամկետներում ձեռնարկեր համապատասխան գործողությունները՝ տեղեկանալու հայցադիմումի վերադարձման մասին նաև այլ ողջամիտ եղանակներով և միջոցներ ձեռնարկել առնվազն հայցադիմումը կրկին ներկայացնելու մասով, ինչը սակայն Փաստաբանը չի իրականացրել:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցները իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները**:

7.2 Անդրադառնալով Փաստաբանին վերագրվող վարքագծում Կանոնագրքի 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման հատկանիշներին, Հանձնաժողովն արձանագրում է.

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Փաստաբանը **04.04.2023թ. ծանուցմամբ լուծել է Դիմողի հետ կնքված բոլոր պայմանագրերը (այդ թվում՝ 02.10.2022թ.):** Նշված ծանուցման մեջ Փաստաբանը հղում է կատարել Կանոնագրքի 3.8.2 ենթակետի հիմքերին, ինչպես նաև մեջբերել է որոշ հանգամանքներ, որոնցով պայմանավորել է պայմանագրերի լուծումը:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ չնայած Կանոնագրքի 3.8.2 ենթակետով ամրագրված են իրավական օգնություն ցույց տալու մասին պայմանագրի կատարումից հրաժարվելու հիմքերը, այնուամենայնիվ, Փաստաբանի կողմից պայմանագիրը լուծելիս այդ հիմքերի վկայակոչումը չի կարող լինել ինքնանպատակ և ցանկացած դեպքում պահանջում է Փաստաբանից բացատրել վստահորդին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները՝ զերծ մնալով այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին: Ընդ որում, հաշվի առնելով Կանոնագրքի 3.8.2 և 3.8.3 ենթակետերի համատեքստում Փաստաբանին վերագրվող վարքագծի դրսևորման առանձնահատկությունները, այդ ենթակետերի

խախտման հատկանիշների բացակայության վերաբերյալ ապացուցման պարտականությունը կրում է հենց Փաստաբանը:

Տվյալ դեպքում, սույն կարգապահական վարույթի շրջանակներում ներկայացվել է պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ինքնին չի կարող դիտարկվել որպես ապացույց առնվազն դրանում նկարագրված հանգամանքների հաստատված լինելու, ինչպես նաև պայմանագրերը լուծելու պատճառները վստահորդին բացատրելու մասին: Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում ընդգծել նաև, որ սույն կարգապահական վարույթի շրջանակներում Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց կնքված պայմանագրերը լուծելու պատճառներից որևէ մեկը հիմնավորելու վերաբերյալ: Դեռ ավելին՝ Փաստաբանը պայմանագիրը լուծելու ծանուցեումը 04.04.2023թ. ուղարկել է Դիմողին միայն Դիմողի կողմից ՀՀ Փաստաբանների պալատ բողոք ներկայացնելուց հետո (բողոքը ներկայացվել է՝ 27.03.20232.), ինչը վկայում է այն մասին, որ Փաստաբանը առանց բավարար հիմքերի (հակառակը չի հիմնավորվել Փաստաբանի կողմից ապացույցներ չներկայացնելով) լուծել է պայմանագրերը:

Բացի այդ, չնայած **02.10.2022թ. կնքված պայմանագրի 2.2.8 կետով** նախատեսված է պայմանագիրը լուծելու դեպքում վճարված գումարը չվերադարձնելու դրույթը, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց պայմանագրերը լուծելու պատճառների առկայությունը հիմնավորելու վերաբերյալ, իսկ առնվազն **02.10.2022թ. կնքված պայմանագրով** տրված հանձնարարությունը ամբողջ ծավալով չի կատարվել, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը պետք է վերադարձներ **02.10.2022թ. պայմանագրով** վճարված հոնորարի մի մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել: Այսինքն, չի ապացուցվել պայմանագրով նախատեսված այն հիմքի առկայությունը, որի վկայակոչմամբ փաստաբանը հիմնավորել է իր վարքագիծը:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Կանոնագրքի 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**:

7.3 Միաժամանակ, Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Նարինե Աբելյանի նկատմամբ 3.6.1 և 3.8.4 (3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշների մասով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք.*

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին և 3-րդ պարբերությունների համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝*

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ...

3) վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք ոչ միայն արտաքուստ, առանց դրանց

ըստ էության քննության, ողջամիտ կասկած են հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ, այլ նաև ապացուցում են դրանց առկայությունը: Ընդ որում, ***այն դեպքում, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են, ապա փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթը ենթակա է կարճման***:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Կանոնագրքի վկայակոչված կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ պայմանագիրը լուծելիս: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հանձնարարության կատարման ընթացքում վստահորդին տեղեկացնելու և նրան հետաքրքրող հարցերին պատասխանելու, ինչպես նաև պայմանագիրը լուծելիս հանձնարարության ընթացքում ձեռք բերված կամ փաստաբանին հանձնված փաստաթղթերը վստահորդին վերադարձնելու պարտականություններին:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Դիմողի և Փաստաբանի միջև առկա հաղորդագրությունները փաստացի վկայում են այն մասին, որ Փաստաբանը 2022-2023 թվականների ընթացքում կապ է պահպանել Դիմողի հետ և տեղյակ պահել նրան հանձնարարության ընթացքի մասին:

Բացի այդ, նկատի ունենալով, որ պայմանագիրը լուծելու մասին 04.04.2023թ. ծանուցմամբ Փաստաբանը նաև հայտնել է պատրաստակամություն Դիմողի գործերով բոլոր առկա նյութերը վերադարձնելու վերաբերյալ, Հանձնաժողովը գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանն առնվազն չի խուսափել այդ պարտականությունը կատարելուց: Այս համատեքստում, Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ փաստաթղթերը վերադարձնելու պարտավորության կատարումն իր հերթին կախված է նաև Դիմողի կողմից ձեռնարկվող միջոցներից: Այսինքն, եթե Փաստաբանը պատրաստ էր փոխանցել գործում առկա փաստաթղթերը, սակայն Դիմողը (վստահորդը) որևէ ողջամիտ միջոց չի ձեռնարկել դրանք ստանալու ուղղությամբ, ապա Փաստաբանին չի կարող վերագրվել այդ պարտականության չկատարման վարքագիծը:

Միաժամանակ, հատկանշական է նաև այն, որ սույն կարգապահական գործի շրջանակներում 02.06.2023թ. կնքված փաստաթղթերի հանձնման-ընդունման ակտով բոլոր փաստաթղթերը փոխանցվել են Դիմողին, որպիսի պայմաններում էլ Դիմողն այդ մասով որևէ պահանջ չուներ Փաստաբանի նկատմամբ:

Նշվածը հաշվի առնելով, ինչպես նաև գործում առկա ապացույցները իրենց համակցությամբ, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանին վերագրվող Կանոնագրքի 3.6.1 և 3.8.4 (3) ենթակետերի պահանջի խախտման մասով բացակայում են դրա առերևույթ հատկանիշները, որպիսի պայմաններում էլ այս մասով հիմնավորված չէ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով և հաշվի առնելով, որ Փաստաբանի նկատմամբ արդեն իսկ կիրառվել են «նկատողություն» և «խիստ նկատողություն» տույժի տեսակները՝ Հանձնաժողովը գտնում է, որ նրա նկատմամբ որպես հիմնական կարգապահական տույժ պետք է կիրառվի «տուգանք» տույժի տեսակները՝ օրենքով նախատեսված առավելագույնի կեսի չափով, քանի որ մեղմացնող և ծանրացնող այլ գործոններ չեն արձանագրվել:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և 2-րդ մասի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Նարինե Արամի Աբելյանի (արտոնագիր՝ թիվ 2654) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք՝ 100.000 ՀՀ դրամի չափով՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.8.2, 3.8.3 և 3.8.4 (1) ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Նարինե Արամի Աբելյանի (արտոնագիր՝ թիվ 2654) նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-23019 կարգապահական վարույթը Կանոնագրքի 3.6.1 և 3.8.4 (3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշների մասով կարճել:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23019-3-Ա
20 սեպտեմբերի 2023թ.
ք.Երևան